ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ ԴԱՍԸՆԹԱՑ «ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ

10.04.2014 10:39

Հարգելի փաստաբաններ,
ՀՀ փաստաբանների պալատի կողմից հավատարմագրված Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA/ROLI) հայաստանյան ներկայացուցչությունը կազմակերպում է երկօրյա վերապատրաստման դասընթաց Լոռու մարզի փաստաբանների համար «Մեղադրյալի իրավունքների ընդլայնումը ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում» թեմայով:
Դասընթացը տեղի կունենա 2014թ. ապրիլի 12-ին և 13-ին «Կիրովական» հյուրանոցում (ք. Վանաձոր, Մաշտոց փողոց, 1 շենք), ապրիլի 12-ին ժամը 11:00-ից մինչև 17:30-ը, ապրիլի 13-ին՝ ժամը 10:15-ից մինչև 17:00-ը: Դասընթացը կվարեն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարուքյանը և փաստաբան Ռուբեն Հակոբյանը:
Տեղերը սահմանափակ են' 30 մասնակից:
Մասնակցելով երկօրյա դասընթացին' յուրաքանչյուր փաստաբան կլրացնի պարտադիր վերապատրաստման 16 ժամ:
Լրացուցիչ տեղեկությունների և դասընթացին գրանցվելու համար խնդրում ենք մինչև 2014թ-ի ապրիլի 10-ը (ներառյալ) զանգահարել ABA/ROLI Հայաստանյան ներկայացուցչության գրասենյակ 554-991 և 556-449 հեռախոսահամարներով:
Կից ներկայացվում է դասընթացի օրակարգը:

Բեռնել օրակարգը

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })